

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՀԱՐԱՅ.

(ՇԻՐԱՆԻՐԱՆ):

1. ՄԻՋԻՆՔ.

ՍՆՆԱԼՈՐԿԱՆ ՕՐՆ Ե լոյսն: — Շա-
րունակ փոփոխութիւն օդոյ և լոյս արե-
գական ամենէն առաջ կարեւորք են մար-
դոյն, մանաւանդ մանկութեան ժամա-
նակն, երբ գործարանք մարմնոյն արագ
զարգանան, և հետեւաբար օդոյ մաքրու-
թեան ամենակարեւոր կէտն է այն: Չքօս-
նելով պոլոտայից մէջ՝ միակնարկ արձա-
կեմ մեր քաղաքի մթին և նեղ *) կոյանո-
ցաց վերայ, տես այդ թշուառ և կապա-
րազոյն արտառածը՝ որոց ⁹/₁₀ մեռանին իւ-
րեանց առաջին տարւոյն մէջ, իսկ մնա-
ցորդքն թէպէտ ապրին՝ սակայն հիւան-
դոտ մանկութեամբ. այս կարեկցելի ման-

(*) Որպէս ես թարգմանելով նմանապէս սկա-
նատեք կարգալով, սաստիկս պիտի ցաւին մեր
ազգայնոց զիւղական կենաց վերայ, որք ամենայն
գիւղորէից մէջ զրեթէ ունին կոյանոցս և աղքա-
նոցս բոլորովին բաց և իւրեանց շնչոյ առեւտրոյն
ենթակայ. թէ ի՞նչ հիւանդութիւնք և մարմնոց
մանկանց գործարանաց զարգացման ժամանակն
ի՞նչ հիմնական ազդեցութիւն պիտի ներգործվին՝
բնազնից քաջ յայտնի է. թող զայս, ողբալի
նկարագրութեանց նիւթ, ձմրան ժամանակ գոմե-
րումն նստած բազմութեամբ, ի՞նչ գեղեցիկ օդա-
փոխութիւնս վայելեն, ժողովարանն ջերմանայ ա-
նասնոց թանձր արտաշնչութեամբ և զրեթէ յե-
տոյ Եգիպտական խաւարի պէս՝ շօշափելի դառ-
նայ, և նոքա ախորժանօք կատարեն իւրեանց

կունքն կիան այնպիսի պոլոտայից մէջ,
ուր ոչ միայն արեգակն իւր զօրացուցիչ
ճառագայթս ոչ արձակէ, այլ և օդն իւր
փոփոխութիւնն զլանայ շինուածոց չոր-
րորդ կարգէն ստոր բնակչացն:

Նայեցէք ընդ հակառակն միջօրէի ժա-
մանակն մեր թաղերի մեծամեծ հրապա-
րակաց վերայ, որք թէպէտ չեն շատ հա-
րուստ, բայց օդն և արեգակն առատա-
ձեռնեն անդ. քաղաքեցէք մահացեալ
մանկանց թիւն, կենդանեաց հասակն, զօ-
րութիւն և կերպարանքն:

Պոլոտայք կղզոյն ստորերկրեայ գոր-
ծարանօք ամենածիր բոլորեալ ճշմարիտ
նկուղք են, ուր կեայ ջանասէր հասարա-
կութիւնն և շնչէ օդ ժահահոտ, և հա-
ղիւ գիտէ արեգական լուսոյ դոյութիւնն,
երբ նայինք այն տեղի ոստայնանկաց վե-
րայ՝ օդոյ փոփոխութեան արդիւնքն դիւ-
րաւ կարեմք ճանաչել:

Բնակութիւն ընտրող մարդն պարտի
բնակիլ օդբանուկ կամ հովասուն տեղ,
քաղաքի մէջ թող ընտրէ իւր բնակու-
թիւնն արեգդէմ և հողմահար տեղ,
պարտի մերժել խոնաւ և խորանիստ
բնակարանն, որ հայի նեղ պոլոտայի վե-
րայ. արտաքոյ քաղաքաց պարտի երկնչել
ճախնային և խոնաւ տեղերից:

Զրոյ ընթացքն ունի ամենամեծ ազ-
դեցութիւն իւր ոռոգած երկրի օդոյն վե-

շնչոյ առեւտրին: Այն երանի թէ զիւղական քա-
հանայք և դատաւորք մի քանի ժամ ևս գորա
կարգադրութեանն զոհէին, աղքատոցս ամրածա-
ծուկ գործելով, գոմերի ժողովներն սենեկի փո-
խարկելով, որով մերազնեայ ապագայ սերնդոյ
փառաւոր երախտաւորք պիտի հանդիսանային:

բայ, քանզի առուաց երեսաց վերայ միշտ կան ներհակաշունչ օդք: Ալպեան ձորոց մէջ ամենայն տեղ, ուր սրբնթաց գնան հեղեղք, կենդանի է օդն և հասարակութիւնն առողջ. իսկ ընդ հակառակն՝ ուր ջուրքն են մօրական և յամրագնաց, օդ գաշտավայրին է ժանտահոտ իւր ջրոյ նըման, որոյ բնակիչք են **Վ. րէթին** *) (Cretin):

Ոչ այնչափ երկիւղալի է ապականեալ և նիսեալ հոտն զօրաւոր սոսնձոյ գործարանին, որպէս Ճախնային բղետմն առուակաց կամ եղեգնուտ արօտատեղեաց. ածխոյ կազն բոցավառ խարուկիւ այրման ժամանակն թէպէտ ոչինչ հոտ տարածէ, բայց սպանանէ:

Ժահահոտ աղբեւք — de Mont faucon (լեւին Բազէի) շնչէ անախորժութիւն, և զայրացուցանէ զգայարանս. բայց այս ժանտահոտութեան բղետմն ոչ զգալաբար ազդէ տեղական և շրջակայ աշխատաւորաց վերայ. ոչինչ այնպէս ապականէ զօդն՝ որպէս անասնական արտաշնչութիւնն, բազմամարդ ժողովն և անասնոց խումբն ամիսոփ անջուղեութեան մէջ հաստատէ ամենավտանգաւոր ժահահոտութեան վառարան **): Աստի քաջայայտ է թէ typhus, ժանտատենդն պատճառի ի մի վայր ժողոված շատ հիւանդ-

ներից, մի թաղի մէջ ժողոված բողմամարդ հասարակութենէ, որում ապացուցութիւն կարելի է համարել (cholera), հնգախտի ամենամեծ կոտորածը 1832 ամի, որ հանդիպեցաւ վարձեալ սենեկաց բազմութիւ բնակչաց մէջ: Ապաքէն կարի զգուշանալի է բազմութիւ մարդկան բնակիլ մի սենեկի մէջ, հասարակօրէն զգուշանալ պէտք է նեղ և փակեալ անկիւններում ոչ ննջիլ, մի և նոյն անկողնոյ մէջ ոչ ննջեցուցանել մանկունս՝ որ բազմաց սովորութիւն է:

Ի դիշերի տունիք արձակին շատ ածխաթթուս, և առաւել ծծին օդային թթուածինս: Ծաղկանց անուշահոտութիւնն ունի ջրային դրից վերայ մի վտանգաւոր աղբեցութիւնն. ապաքէն խոտելի է պահել ի մէջ ննջարանի զհոտաւետ և զանհոտ տունիս կամ ծաղկունս:

Եթէ հարկ լինի քեզ բնակիլ բազմամարդ թաղերի մէջ, կամ մի տան մէջ ներփակուած շատ մարդկան հետ, վերնաշարին ընտրեալ քեզ. եթէ ձեր լուսամտներինցն երեւում է ձեզ երկնից մի մեծ ընդարձակութիւն, եթէ ձեզ կարելի է թափանցել տալ ձեր բնակարանի մէջ արեգական ճառագայթս և կենդանի օդ, յայնժամ դուք կարի զգուշացած կը լինիք ընդդէմ վնասակար պատահարաց, որք յառաջ գան քաղաքաց բնակութենէն: Ատանդաւոր է աչքը ձգել արեգական լուսոյ ազդեցութեանը, կամ սասախութեամբ բեկրեկեալ արհեստական լուսոյն: Յետալիս մանաւանդ ի ճյօրենցիայ՝ ուր բնակարանաց մեծ մասն ներկուած են սպիտակադոյն, և փողոցքն սալայատա-

(*) Ալպեանց լեռանց բնակչաց մի մասն են Զուլցերից Սիօն քաղաքի մէջ, որք բոտ աշխարհաբաց՝ են խուլ մունջ անկար և գրիթէ անզգայ, վզերին տալն ևս կոխած մեծաղիւր (խուլ) եղունդն պարանոցի ունին:

(**) Ուշադարձութիւն պէտք է գոմարնակ ազգայնոց ձմրային կենաց վերայ:

կած մոխրագոյն փայլուն քարամբք, խիստ յաճախ են աչացաւք:

Ոչ մի տեղ այնչափ դտանին բազում կոյրք՝ որչափ յարեւելս, որոց բնակարանք բռեալ են (գաճուկրած). կօշիակարք և ընդհանրապէս գործաւորք՝ որք ի գործածեն զտեալ ջրով լի ապակեայ գունան առաւել լուսաւորութեան համար, տան հիւանդանոցաց զմեծ մասն աչացաւութեամբ տկարացելոց: Պործաւորք՝ որք աշխատին փայլուն նիւթերով, ենթակայ են մի և նոյն վտանգաց. կանթեղք՝ որք արձակին զսաստկազին լոյս, և աշտանակն՝ և նորա շառագոյն բոցն և վնասակար դողդոջին լոյսն գրեթէ հաւասարապէս վտանգաւոր են տեսութեան:

Թէպէտ այդ ամենայն լուսաւորութիւնք նիւթական օգուտս կարեն բերել մարդոյ, սակայն կարի վտանգաւորք են ամենամերձ լինելն նոցա աչաց: Ճրագի լուսով աշխատաւոր անձն՝ որչափ հնար է՝ պարտի վառարանն իւր գլխիցն ի վեր հաստատել փոքր ինչ յետուստ կողմանէ. քանզի երբ իւր դիմացն է կամ ի մի կողմն, իւր ճառագայթները ուղղակի արձակում է աչաց վերայ: Աւ որպիսի ևս զգուշութիւն ունիցի՝ անօգուտ է, վասն զի աչաց գունան զրգռի ծայրամէտ և բացական գծից շեղութեան անընդիմադիր զօրութեամբն, որում և փութապէս ընտանայ:

Ահա այս առթիւ չէ պիտոյ մանկանց որորանն դնել այնպիսի տեղ՝ ուր լոյսն կարող է կողմնակի հարկանել աչաց, կամ ուղղակի արձակել դիմացն:

Աղանակն (climat), և փոփոխական առողջապահական ուսուցմն ունին ամենա-

մեծ ազդեցութիւն առողջութեան վերայ հետեւելով նահանգաց երկրագնդին: Հնդկացիք կարեն ապրել բրնձով և կաթնազոյն ջրով. Հասարակածի տակ բնակիչք յաճախ լուացմամբ կարող են պատերազմիլ բարեխառնութեան ազդեցութեան հետ, որ երբեմն վերագոյնն է քան իւրեանց՝ ազդեցութիւնն: Արեւելայք և հիւսիսայինք ոչ կարեն ճաշել առանց գինեոյ և մոյ: Աթէ լուսայումն յոյ՛ կարեւոր է նոցա, ոչ թէ չափազանց արտաշնչութեան ազդեցութիւն բարեոքելոյ առթիւ է, այլ մորթոյ կակղութեան համար է, որպէս զի ջրական խոնջանաց հետ կարողանան պատերազմել, և յաջողել կանգնեցուցանել կենաց կանոնի ազդեցութիւնն. որոց մէջ հազրւագլուտ է կորովամիտն:

Չհրմ երկրից հիւսիսային կողմն փոխադրուած անձինքն՝ պարտաւոր են առաւելապէս ձգնել իւրեանց մարմնոյ կազմութիւնն յարմարեցուցանել տեղոյն ցուրտ օդոյ ազդեցութեանն. անկ է նոցա զգնուել ասուելէնա (flanelle), նա և ամրան ժամանակ. վտանգաւոր է նոցա բարեխառնութեան յանկարծ փոփոխութիւնը. փոքր ինչ գինի, կենսական սնունդն շատ յարմար պիտի լինէր նոցա՝ եթէ նոցա մարսողական գործարանքն հարաւային երկրի խովացոյղ կենաց կանոնին ապականուած չլինէր:

Հարաւային Արեւադարձի բնակիչք պարտաւոր են կենաց սակաւագրգիւ կանոնին ենթադրուիլ. ցուրտ ջրով լուացումն, անկական սնունդն և թթու պրտոցոյ չափաւոր գործածութիւնն օգտակար են նոցա, մանաւանդ նկատելութեան

ժամանակ, որից չափազանց խոյս տան նորա :

Ժաքմանն հասանելով Բանկալոյ առանձնացաւ ի լեռան, և հեռեկեցաւ առողջապահութեան ամենախիտ կանոնաց, և հակառակ իւր աշխատանաց և տառապակրութեանց՝ հղանակի մահաբեր ազդեցութենէն ազատեցաւ. բայց այսպիսի խոհեմութեամբ երկու ամ անցուցանելէն զինի, օրինակն զայն քարշիւղով տարաւ իւր հետ Անգղիացի բարեկամաց ցանկն, և բերեց նմա առաջին հարուածն, քանզի բոլորովին վստահանալով իւր զօրութեան՝ նա ոչինչ համարեց ջերմութիւնն, վեց եօթնեկի միջոցում ճախնային ժահահոտ Սալսիթ կղզւոյն՝ լերդախտի վիճակեցաւ :

Բարեխառնութեան յանկարծակի փոփոխումն կրճից յաճախակի հիւանդութեանց առիթ է. խոնաւ ցուրտն մթնոլորդական վիճակի մէջ ամենաշնասակաւաց մին է. ընչաւէտն դիւրաւ կարէ ազատիլ մեր եղանակաց տառապեցուցիչ ազդեցութենէն, նա՝ որոյ աշխատանքն հետեւաբար առողջութիւնն են միմիայն հնարք գոյութեան, պիտի հոգատարութեամբ խոյս տայ անխոհեմութենէն, որ բազմիցս մահաբեր է :

2. ԱՐՏԱՔՈՒՍՏ ՄԱՐՄՆՈՅ ԳՈՐԾԱԳՐԵԼԻՔ.

ՉԳԷԱՓՆԷ : Բրդեղէն զգեստուց գործածութիւն ձմրան եղանակին ամենեցուն կարեւոր է, զոնէ մարմնոյ գերագոյն մասին համար. նոյնպէս և ամրան եղանակին հարկաւոր է այնոցիկ՝ որոց արուեստն պարտաւորէ աշխատել բացօթեայ և խո-

նաւ տեղեր, և պէտք է այդպիսեաց զգեստել նուրբ հանգերձ՝ և մանաւանդ չմերկանալ հանգերձն քրտնած ժամանակ :

Բրդեղէն զանկապանքն հաստատեն արեան ամենասաստիկ յորդումն դէպ ի սրբունքն, վասն որոյ պէտք է երիտասարդութեան հասուն հասակի մէջ դադարել այդ գործածութենէ իւրեան առանձին առողջութեան առթիւ, իսկ ծերութեան հասակին հարկ է դարձեալ գործածել, որ մեծազին օգնութիւն է ծերութեան, զի նախ՝ արդելու արեան ընթացքն դէպ ի զլուսն, և երկրորդ՝ ծերունիք ոչ կարեն ջերմութեամբ զգեստաւորուիլ. անհրաժեշտ պարտաւորութիւն է ամենայն աշխարհի՝ մշտապէս զգեստել թիթե մուշակ. քանզի հարբուղի ցրտառութեամբ ոտից պատճառի, նա մանաւանդ բազմիցս տեսանեմք թէ երկարատեւ հազն ներէ տիցն գործածել կօշիկս՝ որ բնապէս առողջապահական է *) : Այսպիսիք ընդհանրապէս ոչինչ ցաւոց չեն ենթակայ, այլ ընդհակառակն մեծամեծ օգուտս կրթեն առողջութեան համեմատութեամբ՝ ջերմութեամբ զգեստաւորուելով :

Մեր կլիմայի նաւաստիք բրդեղէնս կրեն իւրեանց մարմնոյ վերայ և շատ նոյն

(*) Աշտարակութեամբ արժանի է նկատել, թէ որքան անձինք արդէն իւրեանց մանկութեան հասակին զրկին այս անդին առողջապահական վիճակէն, ոմանք յիմար սովորութեամբ, ոմանք իւրեանց ծնողաց անհոգատարութեամբն և ժլատութեամբն, և որ ցաւալին և կարեկցելին է չաքաւորութեան պատճառաւ :

նիւթովն թանձր հանդիւրձաւ, այս պատճառաւ դրէ թէ բնուեալսն ուսած չէ նաւաստեաց վերայ մաշարացական ախտի նշան (phthisie), որք ցրտոյն անհամամատ ըզգեստով շրջին, կրծոց տկարութիւն անշուշտ շահին. մի տարվանէ մինչեւ 15 տարեկան մանկունքն, որք մեռանին ձմրան եղանակին, նոցա մեծ մասին հիւանդութիւնն ցրտիցն է յառաջ գտնուի:

Հիւսիսային Ամերիկոյ վայրենիք բոկոտըն շրջին ի մանկութենէ սկսեալ և երիտասարդութեան հասակն մտանելով՝ նոցա մեծ մասն տառապին յօգացաւութեան ախտաւ (Rhumatismes):

ՅԱնդդիայ՝ ուր մանկունք կիսամերկ շրջին, աղախնայք բազում կնիւրէն մինչեւ յուն մերկ աշխատին, իսկ կանայք թիթեւ զգեստն, բայց ամա, թէ ի՞նչպէս արդի համեմատութեամբ նկատի նոցա մէջ թոքոց ծիւրական ախտն. 1. օնորոշի մէջ մեռելոց քառորդն նոյն ախտիւն են կնքում իւրեանց կեանքն: Այս ախտն Վազդիա կանանց մէջ այնչափ յաճախ ոչ երեւի, բայց կոյսութենէն զկնի յաճախեցաւ, քանզի կանայք սկսան մազերն պահել ըստ օրինակին թիթեւի՝ բազուկս և կուրծս մերկ ունելով:

Ուրեմն այս աւելի մահաբեր նախապաշարումն է քան թէ այն ծնողաց նախապաշարումնքն, որք ձմրան եղանակին զբոսանաց ուղարկեն իւրեանց մանկունս, ուսն բազում կնիւրն և սրունքն մերկ, նոցա մարմնոց կազմութիւն առաւել ևս զօրացուցանելոյ դիտմամբ:

Այս մի աղետալից նորաձեւութիւն է, ինչպէս մի քանի տարի յառաջ երիտասարդուհիք և կանայք ընկալան, ուսն և

պարանոց բաց գութս գալ, հարկաւոր չէ զգեստքն շատ գործել զլեւաւորաբար մանկութեան և երիտասարդութեան առաջին հասակի մէջ, պարտ է զգուշանալ չար ունակութիւնէ դայիկաց. քանզի նոքա ուժգնակի սեղմեն խանձարրով մանկանց կուրծքն. ոչինչ այնպէս հակառակ է զարգացման մարմնոյ, որպէս խանձարրով և նեղ զգեստով ճնշումն մարմնոյ կանանց բաժկոնակաց գործածութիւնն օգտակար չէ ինչպէս ուղղամարդական միջոց մերձաւոր հասակի խոտորման վիճակի մէջ, կամ այն հասակի՝ որ որդէն սկսած է գործողրել զայն ունակութիւնն, զոր գրեթէ ամենայն կանայք ունին, այս ինքն սաստիկ սեղմել զիրանն, որով առողջութեան վերայ գան խիստ աղետալից ազդեցութիւնք, թէ պատանեկութեան և թէ կենաց մնացորդի մէջ՝ սաստիկ խափանելով շրջանն. թոյլ զգեստ ամբարն եղանակին են զով, իսկ ձմրան եղանակին՝ ջերմ:

1. լուացումն ամբարն է գերազանց հնարառողջութեան, ցուրտ լուացումն ապա գործարանաց մարմնոյն ներդաշնակութիւն և օգտուէալ հաւասարակշռութիւն մթնոլորդական ջերմութեան ազդեցութեան. գաղջ լուացումն բաց ի մորթոյ մաքրութենէն և կակղութենէն՝ նաև մորթային տկարութենէն ազատ մնալոյ մեծ նախազգուշութիւն է, բայց հազողաց վրտանգաւոր է, իսկ ծերոց երբեմնակի յարմար:

Վախուղ խողանակաւ փոքր ինչ բրդի կամ սպիտակեղէնի կտորն մորթոյ վերայ շփելն՝ կակղացուցանէ ջրդա, առաւելու նոցա զօրութիւնն և ցլուէ զնոնջն. իսկ

մանկանց վերայ գործածելով՝ կարողապէս յաջողէ՝ նոցա բնական զարգացումն:

(ՇԻՆՆԵՐ)

Թ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶՆԻՒ ՎԱԽՃԱՆ: — ՄԱՀ ԿԱՄ ԿԵԱՆՔ:

Ամենայն որ գործում է կամ խօսում է մի օրինաւոր պատճառով, որ հասարակ խօսքով կոչվում է լատինացի կամ հիմն խօսքի եւ կամ զործոց:

Վարդանանց ազգային տօնը եւ նոցա սիրագործութիւնը խօսքի օրինաւոր սահման կամ հիմն կարող է լինել իւր անմահ յիշատակով: Ուստի սկըսիր:

Ամենայն ազգաց աղբիւրը մի գիտեմք, եւ նորանից բաժանված բոլոր ազգերը: Այս բաժանումն ազգերի բնական է, որովհետեւ ինչպէս ընտանիքի՝ նոյնպէս եւ ազգի մէջ եղած դժամոտութիւնը՝ երկպառակութիւն է կազմում, եւ իւրաքանչիւր կուսակցութիւն մի անհատի խնամոց տակ պարփակուելով՝ աշխատում է իւր կարծեցած իրաւունքը պաշտպանել: հասարակ այս պատճառներով կողմուեցաւ ազգերի ինքնուրոյնութիւնը, եւ այս ճշմարտութիւն է մարդկան իբրեւ մի ազգ դէպ ի Բաբելոն չուելը, եւ այն տեղ եղած դժամոտութիւնը, որոց հետեւանք՝ եղաւ կուսակցութիւն կամ նահապետութիւն, որոց միւր Ազաթանդեղոս հասցնում է եօթանասուն եւ երկուսի: Այս կուսակցութիւնները մէկ զօրութիւն առաջնորդութեամբ՝ զաղծեցան այլ եւ այլ տեղեր: ուր հաստատելով իւրեանց համար բնականութիւն՝ հայրենիք կազմեցին, վախկնացնելով տեղի դրուծիւնը իւրեանց հմուտեան չափ, որի հետ աշխատեցան ազատեալ բարբառին սեպական յատկութիւններ եւ ո՞ն տալ ուրոյնութեան մտքի ամբողջութիւնը յայտնելու համար՝ լեզու կազմել: Սակայն մարդկութիւնը չբաւականացաւ լեզուով եւ հայրենիքով ազգութիւն կազմել. նա զգաց մի մեծ պակասութիւն, որ կարողանար ինչպէս բնականութեան միութեամբ միացած էր, միանալ նա եւ հոգով եւ

զգացմամբ: Ուստի, որոնք ճանաչեցին ազգութեան վնասութիւնը եւ կամեցան յաւերժացնել՝ կրօնի վերայ մտածեցին, բայց սուղապաւն կարճամտութեամբ չկարողանալով իսկապէս հասնել լինել ճշմարիտ Աստուածապաշտութեան՝ նախ բնութեան բնական երեւոյթները՝ գերբնական համարելով՝ աստուածացրին, ապա իւրեանց նահապետներին, կամ հերոսներին նոցա ծնունդ համարելով՝ աստուածութեան ընտանիք կոչեցին. յետոյ աստուածութեան աճող կամ բնական, հայրենիքով՝ գտանուած լեռները, անտառները եւ դաշտերը համարելով՝ նուիրական տեղերը հնարեցին. աւանդութիւնը, որ կրօնի հետեւութիւն էր, կրօնի մասանց համեմատ ծագեցան նոցա մէջ: Հին ժողովուրդը, իւր ճանաչած աստուածներին սկսեց մեհեաններ շինել եւ իւր հերոսներին կանգնեցնելով նոյն մեհեանների մէջ՝ սկսեցին պաշտօն մատուցանել:

Քուրմերը որոց ձեռքին էր ժամանակի գիտութեան բանալին, աշխատեցան մինչեւ հաւատացրին ժողովրդեան, թէ այն աստուածներ՝ որոց պաշտօն են մատուցանում՝ նոքա, որք զաշխարհ ստեղծեցին, ոմն բարոյ եւ ոմն չարի՝ բուրմերի ձեռամբ յայտնում են ժողովրդեան՝ ապագայն, եւ ժողովուրդը բուրմերի երկբայական պատգամների մէջ զանուած երբեմնական իսկութեան խաբուելով, որ պատահմամբ լինում էր, հաստատուեցաւ, ուստի իւր արիւնը նուիրել աստուածներին իրրեւ զո՞հ՝ չէր խնայում. իւր հայրենի ունեւորութեան եւ նուիրական տեղեաց համար նա քաղցր էր համարում մեռանել քան տեսնել նշանախեցն անգամ յեղափոխուած: Այս ամենը բարի նպատակի էին ծառայում, սակայն միջոցները նոյնքան բարի չէին. ուստի սնոտիսպաշտութեան ժամանակ, Նախախնամութիւնը իրրեւ դատարարակ աշխարհի պահեց Հրէից ազգը, որի քարոզած Մեսիայն պիտի ազնուացնէր ազգութեան մշտնջենաւորութեան նպատակի միջոցները: Երբ արդէն հեռանաւ ժողովրդից նոյնպիսի մարդիք յառնելու էին ինչպէս Ուրբատէն էր, եւ ժողովուրդը աչքը բաց անելով իմանալու էր թէ որոց իւր որդին է նուիրում՝ չեն աստուածներ. եկաւ ճշմարտութեան վարդապետը Հօր Աստուծոյ ծոցածին որդին, որ փոխանակ բուրմերի նման բազմաստուածութիւն եւ նոցա համար մարդադոմութիւն բարոզելու իւր ստեղծած արարածի յար-